ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱԶԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՆՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2011թվականի 1-ին կիսամյակում Արազափի գյուղապետարանը իրականացնելով Հայաստանի Հանրապետության կառավարության Արմավիրի մարզպետարանի ինչպես նաև համայնքի ավագանու կողմից ընդունված որոշումները զգալի աշխատանքներ են իրականացվել համայնքի առջև դրված խնդիրների բարեհաջող լուծման համար: 2011թվականին համայնքի ղեկավարի առաջին կիսամյակի հաշվետվությանն ներկա էին ավագանու յոթ անդամները, դպրոցի տնօրենը ,բուժ.կետի բուժաշխատակիցը գյուղապետարանի աշխատակիցները և համայնքի 30 բնակիչներ: 2011 թվականի վաղ գարնանից մաքրվել են գյուղամիջյան ջրատար առուները, մասնակիորեն բարեկարգվել և ավազապատվել են գյուղամիջյան փողոցները, մասամբ վերանորոգվել է գյուղի խմելաջրի ցանցը: Գյուղապետարանի ուշադրության կենտրոնում է նաև բնակչության կոմունալ-կենցաղային պայմանների բարելավման հարցերը:Յուրաքանչյուր ամիս կազմակերպվել և կազմակերպվում է աղբահանություն պահպանելով համայնքի սանիտարահիգենիկ նորմերը: Համայնքը մասնակցել է նաև մայիսի 28-ին Սարդարապատում կայանալիք միջոցառմանը:

Մայիսի 28-ին Ռուսական սահմանապահ զորքերի օրվա առթիվ նույնպես գյուղապետարանի ուշադրության կենտրոնում եղան Արազափի սահմանապահ ուղեկալում աշխատող և մեր անդորրը պահպանող զինվորները:

2011թվականի հունվար ամսից մինչ օրս արձանագրվել է հինգ արձանագրություն,որոնք ունեցել են բազմաբնույթ օրակարգային հարցեր և այդ հարցերը ներկայացվել են համայնքի ավագանու քննարկմանը և որոնք հաստատվել են առանց առարկումների: Կազմակերպվել և կազմակերպվում

է համայնքի հանրային և սննդի առևտրային կետերում ստուգումներ և համապատասխան եզրակացություններով կից գրությունով ամեն կիսամյակ ուղղարկվում մարզպետարան: Այս կիսամյակի ընթացքում համայնքի ղեկավարին դիմել են համայնքի բնակչության մեծ մասը տարբեր կենցաղ կոմոունալ հարցերով և ստացել դրական պատասխաններ իրենց հուզող հարցերին: Գյուղապետարանի աշխատակազմը բաղկացած է 10 անձից որոնցից՝ հինգը համայնքային ծառայողներ են , էլեկտրիկ- փականագործ, բանվոր և երկու տեխնիկական սպասարկող հավաքարար և պահակ:Իրավասությունների շրջանակներում ընդունվել է 13 որոշումներ և արձակվել 23 կարգադրություններ:

Ֆինանսական բաժին – Ինչպես անցած տարիների ընթացքում այնպես էլ 2011թվականի առաջին կիսամյակի ընթացքում աշխատակազմը աշխատավարձը ստանում է յուրաքանչյուր ամսվա մինչև 31-ը և աշխատավարձի պարտք գյուղապետարանը չունի:

2011 թվականի հողի հարկի և գույքահարկի կիսամյակային պլանային առաջադրանքերը նախատեսվել է հավաքագրել հողի հարկ 3250.0հազար դրամ,որից հավաքագրվել է 405.2հազ դրամ 12.4%, իսկ գույքահարկից նախատեսված 756.1 հազար դրամից հավաքագրվել է 98.0հազար դրամ 12.9 %:

Այս մի քանի ամիսների ընթացքում նույնպես լուծվեց երկու շատ կարևոր և մտահոգող հարցեր վերանորոգվում է համայնքին պատկանող մանկապարտեզի շենքը և դպրոցի շենքը, որոնց աշխատանքները մինչ օրս շարունակվում են և որի ականատեսն ենք մենք բոլորս :

ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ / / Վ.ՀԱԿՈԲՅԱՆ

ԺՈՂՈՎԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ / / Հ.ԳԱԼՍՏՅԱՆ

ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Արազափի միջնակարգ դպրոցի գազաֆիկացում
2. «Արազափի մանկապարտեզ»ՀՈԱԿ-ի գազաֆիկացում
3. Արազափի մշակույթի տան հիմնավերանորոգում
4. Արազափի խմելաջրի ցանցի վերանորոգում
5. Դեռևս լուծված չէ Արաքս գետ տանող սավաղատարի հարցը